

ՀԱՆԴԵՍՔ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ

ԱՄԵՆ. Տ. ԿԻՐԻՔՆԻ ԱՐԳԵՊԻՍԿՈՍ ԽՍՐԱՑԷԼՆԱՆԻ

ԱՐԺԱՆԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐԳԻ

ՍՐԲՈՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՒՈՅՍ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ:

Պաղեստինի Պետական Առաջ Գարտու-
ղարը ի դիմաց Պաղեստինի և Անդրդրդա-
նանի Բարձր Գործերին, կը հաղորդէր
3/11/1945 թուակիր Պաշտօնագրով թէ Նո-
րին Վեհապառուծիւն Անգլիոյ Թագաւորը
հաճած է տալ իր արքայական ճանաչումը
և հաւանութիւնը Երուսաղէմի Հայոց Պա-
րիարքին ընտրութեան համար և թէ արդէն
իսկ ժամանած է ճանաչման արքայական
հրովարտակը որուն յանձնման թուականը՝
կ'աւելցնէր պաշտօնագիրը, պիտի հաղոր-
դուի իր ատենին ուրիշ գրութեամբ մը:

Միաբանութիւնը՝ որ իր պատրիարքն ու
հայրը ունեցած ըլլալու ուրախութիւնը
կ'ապրէր տարիէ մը ի վեր, խանդավառու-
թեամբ լսեց այս աւետիսը և զուսպ ոգե-
ւորութեամբ անկամ մը ևս յայտնեց իր
ուրախութիւնը Ամենապատիւ Սրբազան
Պատրիարք Հօր:

Դեկտեմբեր 1 թուակիր երկրորդ պե-
տական պաշտօնագրով Պաղեստինի Բարձր
Գործերը կը հրաւիրէ Սրբազան Պատրիարք
Հայրը կառավարութեան տունը Հինգշաբթի
6 Դեկտեմբերին, կատարելու համար պաշ-
տօնական յանձնումը արքայական հրովար-
տակին:

Երկրորդ այս պաշտօնագրով կը սկսի
Ս. Աթոռէն ներս պատրաստութեան շրջան
մը: Ոգեւորութիւնն ու խանդավառութիւնը
վերածուած է եռուզեռի մայրավանքին
մէջ:

Միաբանութեան բոլոր անդամներուն՝
ծերունիին թէ երիտասարդին, բարձրաս-
տիճան թէ հասարակ ծառայողին գէմքե-
րուն վրայ կարելի էր կարգաւ յոյսերու և
աւագոյն ծաղաւաղի անկախութեանց շրջ-
ալըւած ժպիտը: Յնծութեան տօն էր կաթ-
ծէք պատրաստութեան այդ քանի մը օրերը:

Ս. Աթոռոյս յարաբերական դիւանը կը
զառնայ կեդրոնը այս եռուզեռին: Կը տը-
պագրուին հրաւիրագիրներ հայերէն ու
անգլիերէն լեզուներով, կը պատրաստուին
ցանկերը հրաւիրեալներու, կը կատարուին
բանակցութիւններ կառավարութեան ու
պատրիարքարանիս միջև, հանդիսութեանց
կարգադրութիւններուն համար: Կ'ըլլան
աշխատանքներ՝ զոհացնելու համար հոյ թէ
օտար յարգելի անձնաւորութիւնները, ու
բոնք ցոյց կուտան մեծ հետաքրքրութիւն
ու կը յայտնեն շնորհ փափաք ներկայ ըլ-
լալու զահակալութեան հանդիսութեանը:
Այս շարժումներուն հետ յառաջ կը տարուին
նաև յարգարանքի, մաքրութեանց և զար-
դարանքներու աշխատանքները:

Գահակալութեան օրուան վաղորդային
ամէն ինչ կարգին է արդէն: Վանքի աւագ
զուռը, պատրիարքարանի կրկնակ մուտ-
քերը, Ս. Յակոբեանց Մայր Տաճարի նա-
խազակիթի կամարները շրջանակուած են
ու զարդարուած դալար ճիւղերով, ծա-
ղիկներով ու դրօշներով: Պարզուած է նաև
Պատրիարքարանի վրայ անգլիական մեծ
դրօշը, որ կը ծածանի խողաղ, ծալք ծալք
նետելով իր շուքը օրուան հանդիսութեան:

Տօնական մեծ օրերու իր պերճանքին
մէջ է նաև Եկեղեցին: Կամարներու խոր-
հրդաստուերներուն մէջ կը պլպլտն հա-
րիւրաւոր կանթեղներու շարաններ, աւ-
սուրբերու պատկերներուն և խորաններուն
առջև կ'աշտանակուին մոմեր, որոնք հրակէ
իրենց լեզուներով կարծէք կը պատմեն
ամենուս անխորի՝ հին օրերու, ա՛յ օրերու
քաղցրութիւններէն: Դեռինը ծածկուած
է թանկարժէք զորգերով: Պատրիարքա-
րանի մեծ դահլիճը, իր ամենօրեայ կահա-
ւորման մէջ յարգարան: կը սպասէ վաղ-
ուան մեծ պահին: